ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Սլովակիայի Հանրապետության առողջապահության նախարարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Սլովակիայի Հանրապետության առողջապահության նախարարությունը, այսուհետ՝ «Կողմեր»,

Ցանկանալով զարգացնել և ամրապնդել առողջապահության բնագավառում երկու պետությունների միջև համագործակցությունը,

համաձայնեցին հետևյալի մասին՝

Հոդված 1

Կողմերը, երկու պետությունների ներպետական օրենսդրությունների և միջազգային իրավունքի նորմերի համաձայն, առողջապահության բնագավառում կամրապնդեն և կզարգացնեն համագործակցություն հետևյալ ոլորտներում՝
- հեմատոլոգիա,
- սրտաբանություն,
- ուռուցքաբանություն,
- էնդովասկուլյար բուժում,
- առողջարանային բուժում,
- շրջակա միջավայր և առողջություն,
- պալիատիվ խնամք:

Հոդված 2

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հանդիպումից 30 (երեսուն) օր առաջ միմյանց կտեղեկացնեն իրենց փորձագետների անունները, կոչումները, մասնագիտությունները և փորձի փոխանակման համար առաջարկված թեմաները:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն իրենց պետությունների՝ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված ոլորտներում գործող բժշկական և հետազոտական հաստատությունների միջև անմիջական համագործակցությունը:
Հաստատությունների միջև անմիջական համագործակցությունը կիրականացվի գիտական նյութերի և տեխնիկական փաստաթղթերի փոխանակման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ համատեղ հետազոտական ծրագրերի մշակման միջոցով:

Հոդված 4

Կողմերը փոխադարձաբար կխրախուսեն՝
- բժշկական ամսագրերի, առողջապահության ոլորտում ուսումնական նյութերի և պաստառների փոխանակումը,
- բժշկական հրատարակչությունների միջև համագործակցությունը,
- առողջապահության ոլորտի օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը,
- առողջության վիճակագրության և վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հաշվետվությունների փոխանցումը,
- արտակարգ իրավիճակներում տեղեկատվության փոխանակման ոլորտում համագործակցությունը՝ շտապ կանխարգելիչ և հակահամաճարակային գործողությունների կազմակերպման և իրականացման նպատակով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի կիրարկումից բխող բոլոր ծախսերը միշտ կհոգա ուղարկող կողմը:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Փոխոխություններն ու լրացումները կձևակերպվեն առանձին արձանագրություններում, որոնք կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրարկման ընթացքում առաջացած բոլոր վեճերը կլուծվեն Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսաթվին, երբ Կողմերը միմյանց ծանուցում են, որ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտված են և գործում է անորոշ ժամկետով:

Սույն Համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից մեկի՝ մյուս Կողմին Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին դիվանագիտական ուղիներով ծանուցելուց 6 (վեց) ամիս հետո:

Սույն Համաձայնագրի դադարեցումը որևէ կերպ չի ազդի այն ծրագրերի իրականացման վրա, որոնք ընթացքի մեջ են, և դրանք կիրականացվեն մինչև իրենց ավարտը:

Կատարված է Երևան քաղաքում 2013թ. ապրիլի 10-ին երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, սլովակերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանության ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2013թ. հուլիսի 1-ին: